

ՀՀ արդյունաբերողների և գործարարների

(գործատուների) միության նախագահ

պարոն Արսեն Ղազարյանին

### Հարգելի պարոն Ղազարյան

Ի պատասխան Ձեր 20.03.2015 թվականի N 48/2.2 գրության տեղեկացնում ենք, որ ծխախոտի տեխնիկական կանոնակարգման հետ կապված հարցը ուսումնասիրվել է, որի արդյունքում հայտնում ենք հետևյալը՝

1. Ծխախոտի տեխնիկական կանոնակարգը ընդունվել է ԵՏՀ Խորհրդի կողմից 12.11.2014 թվականի N 107 որոշմամբ, որը ուժի մեջ է մտնելու 15.05.2016 թվականին,
2. ԵՏՀ այս պահին շրջանառության մեջ է գտնվում և առաջիկա նիստերից մեկին կներկայացվի տեխնիկական կանոնակարգի կիրառման անցումային դրույթները հաստատելու մասին որոշման նախագիծը:

Վերոնշյալ որոշման նախագծով սահմանվում են ինչպես անցումային ժամկետները, այնպես էլ հանձնարարական ՌԴ կառավարությանը մինչև 15.07.2015 թվականը ԵՏՍ անդամ երկրների հետ համատեղ մշակելու և ԵՏՀ ներկայացնելու համապատասխան հաշվետվության ձևերն և տուփի վրա տեղադրվող զգուշացման և նկարների էսքիզների հաստատման որոշումների նախագծերը:

Տեխնիկական կանոնակարգի կիրառման անցումային դրույթները հաստատելու մասին որոշման նախագծով սահմանվող անցումային ժամկետներն են՝

1. 15.05.2016 թվականից արգելվում է տրամադրել համապատասխանության գնահատման փաստաթուղթ, որը տարբերվում է N 107 որոշմամբ սահմանված պահանջներից,

2. Մինչև 15.05.2016 թվականը տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը գործում են մինչև փաստաթղթում ամրագրված ժամկետը և այդ փաստաթղթի հիման վրա թույլատրվում է արտադրել և իրացնել այդ ապրանքները, բայց ոչ ավելի երկար քան 15.11.2017 թվականը,
3. թույլատրվում է արտադրել և իրացնել այդ ապրանքները, առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի, եթե մինչև N 107 որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգը ուժի մեջ մտնելը (15.05.2016 թվականը) երկրում չի եղել համապատասխան արտադրանքը կանոնակարգող տեխնիկական կանոնակարգ, բայց ոչ ավելի երկար քան 15.11.2016 թվականը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելու ժամկետի հարցը մեր կողմից բարձրացվել է և այս պահին գնտվում է քննարկման փուլում: Քննարկման արդյունքներով ընդունված որոշման մասին Ձեզ լրացուցիչ կհայտնենք:

Հարգանքով՝

ԵՏՀ Կոլեգիայի անդամ (Նախարար)



Կարինե Մինասյան